

գոյութիւնը հայ թարգմանութեան մէջ երբ
բուն իսկ յունական օրինակներու մէջ կը
կը լուծուի երբ նայինք յունարէն բնա-
րփին Կաև էպւժնը ։ Առօն էպն տօնչ ծնօ
շամարուս ալդրուս, ալդրոն ննա տվ Կըրա,
աև ալդրոն ննա տվ ապումպամ։ որ է
ըսել. արկցի Անարոն ի վերայ երկուց են-
խազացն վիճակու. վիճակ մի Տեսան և վիճակ
մի արձակերոյ ինչպէս թարգմանած են մեր
թարգմանիչք։ Անտարակոյս լատին թարգ-
մանիչը, ոչ այնքան հմուտ յունարէնի,
թարգմանել փորձելով՝ չհասկցած բառերը
դրած է նախ յունարէն, և յետոյ ստու-
գելով վերածած է լատիներէն լեզուի. օրի-
նակողը՝ շատ աւելի տգէտ քան թարգմա-
նեանը կը դնեն էպն տան ծնօն — ի վերայ
իշոց։ — Հուսկ ուրեմն կնքենք այս կարգի
սխալներէն ամէնէն աւելի կարեւոր մը
քաղելով լիոնեան թարգմանութենէն ուր
Ղեւտականի գլ. ԺԶ. 8 համարին մէջ ան-
հասկնալի լատիներէն մը կը կարդանք.
Et imponit Aron supra duos hircos
sortem: clerus clerum unum Do-
mino, et sortem et clerum unum ad
dimissionem pompeio և առեղծուածը

Հ. Յովան Արքու



ԿԻՍԱԽՈՐԱԿ. ԱԼԹԱՐԱՄԻ ՄԼՔԵՒ

կը գրին Կաև էպւժնը ։ Առօն էպն տօնչ ծնօ
շամարուս ալդրուս, ալդրոն ննա տվ Կըրա,
աև ալդրոն ննա տվ ապումպամ։ որ է
ըսել. արկցի Անարոն ի վերայ երկուց են-
խազացն վիճակու. վիճակ մի Տեսան և վիճակ
մի արձակերոյ ինչպէս թարգմանած են մեր
թարգմանիչք։ Անտարակոյս լատին թարգ-
մանիչը, ոչ այնքան հմուտ յունարէնի,
թարգմանել փորձելով՝ չհասկցած բառերը
դրած է նախ յունարէն, և յետոյ ստու-
գելով վերածած է լատիներէն լեզուի. օրի-
նակողը՝ շատ աւելի տգէտ քան թարգմա-
նեանը կը դնեն էպն տան ծնօն — ի վերայ
իշոց։ — Հուսկ ուրեմն կնքենք այս կարգի
սխալներէն ամէնէն աւելի կարեւոր մը
քաղելով լիոնեան թարգմանութենէն ուր
Ղեւտականի գլ. ԺԶ. 8 համարին մէջ ան-
հասկնալի լատիներէն մը կը կարդանք.
Et imponit Aron supra duos hircos
sortem: clerus clerum unum Do-
mino, et sortem et clerum unum ad
dimissionem pompeio և առեղծուածը

Պ. Ի. Ռ. Ը.

Մ Խ Ի Թ Ա Ր Ա Բ Բ Ա Հ Օ Ր
Մ է ծ և ւ ա յ ն հ ո զ ի ի ն



ՈՒԽ կը փայլիս լոյսի մը պէս, որ չունի
Ոչ ցուքն աստղին և ոչ շառայլը լուսնին,
Եւ կամ շողկայծն՝ որ սիրոյ պէս կը ծաղկի
Ալբիծ սրտին մէջ կոյսին։

Արդ պանդուխտ ես, քու հոգւոյն մէջ չեն լսուիր
Զեփիւոներուն անցնիլն հովտէն Մասիսին.
Ու քու մատղալ երակիդ զարկն անբասիր՝
Ունի թալիիծն եղնիկին։

Բընութեան մէջ չըկայ լընակ մ'ոսկէթել,
Եւ ոչ առուակ մ'եւ ջուրի ցայտք մը թրթուոն՝
Որ յանկուցիչ կարենայ պահ մ'ինձ ձօնել
Ինչպէս քու տեսքն՝ իմ հոգւոյն։

Ո՞հ, քու կապոյտ աչուկներուդ լացն այդ հեզ,
Եւ ծամերուդ տրտում ալիքն հովին դէմ...
Թաց են այտերդ և քու մատներն են անտես՝
Իմ գրչին հետ դէմ առ դէմ։

Գիր արփաթեւ, մենութիւնն իմ կ'ընես յար
Լեցոնն խինդով, և մըտածումն իմ բորեան
Որուն ակերն երկնի մարգերն են անծայր՝
Գեղմով ուրախ է այնքան։

Ի՞նչ կ'ըսես ինձ, Հայ անմեղ Գիր, այս ձմրան
Տրտմութեան մէջ, երբ կը թափին տերեւներ,
Եւ երբ կ'իջնէ ձիւնոտ անձրեւն անվարան
Առանձնութեան մէջ աւեր։

Պուրակին մէջ և կամ լանջքին տակ լերան
Կամ թէ գիւղի վրլած մատրան մը կողքին՝
Ինձ կը հձես արծաթ խօսքեր գուներիկան,
Խօսքեր՝ անեղծ և անզին։

Պատմութեան փառքն, և դարերուն ալ անցած
Գուն կը ցանկաս որ մեծութիւնն ես յիշեմ.
Թէ Գիրն է լոկ որ կու տայ շնոնչն յաղթապանձ՝
Մեռնող կեանքին դառնադէմ։

Եւ քու փոքրիկ մարմնոյդ մեծ սիրտը յանկարծ
Կը բաբախէ իմ սրտիս մօտ, ես կը զգամ
Որ քեզմէ դուրս ժայթքող տարափն յեղակարծ՝
Կը պեղէ ժայռն յաղթակազմ։

Նըժոյզներու ամպոտ արշաւն անարգել,
Եւ փոթորկոտ մարտերուն թափն հայկակեան
Ինձ կը պատմես, ու շիղերու շուրջ անել՝
Կը ցանես հուրն յուզական։

Ո՞վ սրբազն հայրենի Գիր միւռոնէ,
Գուն կ'ապրիս միշտ, երբ ժամանակն ոչ որի
Ցանձնեց երբեք անմահութեան յակինթէ
Գահիններուն փայլն յուոթի։

Կ'ինան չէնքեր, կը պայթի շանմն երկնածին,
Ու Սեւանայ կոհակներն յաղթ և սոնքած
Կը մաքափին խութերուն դէմ, քու հոգին՝
Լոկ լոյսով է թանձրացած։

Զմրուխտահոծ պալատներու և զաւթի
Ցարկին տակ Գուն մեծցար որդւոյն պէս տիտան՝
Հայ Արքային, մինչ ոգիներ անուրջի
Քու շուրջ մեղմիւ հիռ եկան։

Հանդարտ ես Գուն, մենութեանդ մէջ մեծ և լուռ,
Գեղեցիկ ես զերդ զաղափար մը հզօր
Որ կը շնչէ լոկ ցուքն աստղին հեշտալուր՝
Ալճափներէն մհնաւոր։

Դուն կը ճեմես բարձունքներու մէջ իտէալ,
Ուր հովս անծալ մարգրտի հունչ մ'է երկար,
Ուր լուսնակն յար կը ցանէ թռյրն յամրաքայլ
Երկչու լոյսին իր անմայր...:

Քեզի համար, անոյշ Հայ Գիր, որբացաւ
Ազգն այս չքնաղ, որուն զաւակն եմ անհայր...
Որուն համար մանկիկ հասակս հեռացաւ
Իր հիւղակէն լուսավառ:

Քու թռչնակի վըտիտ մարմինն ըսպիտակ
Կը վէտվէտի երանութեան մը մէջ խոր,
Որուն սահմանն է եզերուած կապորարակ
Վըտակներով հեշտօրօր:

Քեզ սիրելուս համար քուրի՛կս է մեռած,
Երկամեայ սիրոն յեցած հողին քարելուն...
Եւ իմ շուրթիս շուրջ տրտութեան շեշտըւած
Կան խոռոչներն վշտերուն:

Դուն կը ճեմես, կ'անցնիս սրտէս, քընարիս
Կ'առթես սարսուռ մ'եւ երազանք մ'որ երբէք՝
Ես չեմ ճանչցած, և անհանդարտ իմ հոգիս
Կ'օրհնէ պահերն այս բեկբեկ:

Քեզի համար մեռաւ ծառան Աստուծոյ,
Խնկաւ տաճարն և լըռեց զարկն անուշակ՝
Կոչնակներուն, բայց չխնկաւ բերդը Յուսոյ,
Եւ մեր հաւատքն ամրափակ:

Հայրենի՛ Գիր, բեհեզ թեւիդ տակ բոսոր
Ա՛ռ զիս յաւէտ, երբ կղզեակէ առ կղզեակ
Լսուին լազուարթ հունչերն զանգին մեղմօրօր,
Եւ ալիքին տրտուանակ:

Խնկաւ զրչի զաւակներուն հոյլն հոկայ
Կացիններու հարուածին տակ, բայց դարձեալ
Օրհնեալ ըլլայ Աստուծոյ կամքն յակինթեայ,
Հըզօր կամքն իր անայլայլ:

Իմ հոգւոյս որբ սաղարթներուն մէջ մեղմին
Դուն պիտ' նիրհես կոյսերու հետ, որոնց ես
Չեմ մրժուած նոյն իսկ անունն երկնային,
Եւ ափսոսած՝ նայուածքն հեզ:

Բայց մենք կ'ապրինք, մենք կը տեւենք քանի Դուն
Պանդուխտ կամ ոչ վեր ես կեանքէն և Մահէն.
Քանի որ Դուն ապառածի՛ պէս կանգուն՝
Վեր ես թունոտ բիրտ Ուժէն:


Զանոնք ազնիս Աէրն է ծընած հոգւոյս մէջ,
Ըստուերներ որ կը գողզըզա՞ն բորբ լոյսէն...
Ժպանդ քոյրեր, որոնց շրթները անշէջ
Կեանք կ'առնեն իմ քընարէն:

Ստորնութիւնն և վատութիւնը հոսհոս
Եւ բոնակալ ըստահակներն մեր դարուն.
Պէտք է փշրէլ, պէտք է պատռել անոնց զօս
Նայուածքին ակը թաքրուն:

Հանգոյն թախծոտ և հեռացող եղրօր պէս
Սիրած են զիս, ինչպէս ես քեզ եմ սիրած,
Ինչպէս մարմիս բոցուտ վէրքին մէջ անտես՝
Քեզ երկար եմ տաքցուցած:

Եւ դուն դարձեալ լոյսին դէմ մեր արեւուն
Վառիս ճերմակ բոցերու զաղջ շոգիով.
Ըլլաս ազատ, բայց կաշկանդուած մեր հոգւոյն՝
Սիրոյ լայնչի աղեղով:

Տօֆթ. Արսաւր Սրբուն



Հայկական Գրչաղերք

Աստվածազարան Ս. Ղազարու

Ս. ՅՈՎ. ՀԱՅՆԵՍ Ա. ԽԵՏԱՐԱՆԻ Զ

34. — Աւետարամ նզմկայի, թ. 52, ամ զըսութեամ 1431

St. JEAN ÉVANGELISTE

Tétravangile d'Erzinghian, N. 52, an 1431